

## ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱՏԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

### Լ. Ն. ՊԱՍՏՅԱՆ

Գրաբարում բայական սեռը լծորդության միջոցով չէր որոշվում: Այնտեղ առանձին կրավորական բայեր չկային: Ըստ Մանուկ Աբեղյանի՝ «Գրաբարում ներգործական և կրավորական ոչ թե բայերի տարբեր տեսակներ են, այլ միևնույն անցողական բայերի (որոնց մեջ մտնում են մաս պատճառական բայերը) տարբեր գործածության ձևեր...»<sup>1</sup>: Ճիշտ է, Ե լծորդությունը կրավորական դասնալու համար վերածվում էր Ի լծորդության<sup>2</sup>, սակայն Ի, ինչպես մաս Ա և Ու լծորդությունները մեծ մասամբ թե՛ ներգործական էին և թե՛ կրավորական<sup>3</sup>:

Մահմանական ներկայում Ե լծորդության բայերն ունեին ներգործական-կրավորական հակադրություն (սիրեմ-սիրիմ), իսկ մյուս լծորդությունների բայերը՝ ընդհանուր վերջավորություններ:

Մահմանական անցյալ անկատարում բոլոր բայերն ունեին ընդհանուր վերջավորություններ: Բանն այն է, որ Ի լծորդության բայերում տեղի ունեցող ի ժայնավորի եռակի հանդիպադրման հետևանքով առաջացած անհարմարությունը լեզուն հարթել էր՝ Ի լծորդության բայերին այդ ժամանակաձևում տալով Ե լծորդության ձև: Այսպիսի անցյալ անկատարը՝ Ի լծորդությունը փոխելով Ե լծորդության, անհնար էր դարձնում ներգործակերպ-կրավորակերպ հակադրությունը, ուստի բոլոր բայերն էլ ունենում էին ընդհանուր վերջավորություններ:

Առաջին ապառնիում ներգործակերպ-կրավորակերպ հակադրություն ունեին Ե և Ա լծորդությունների բայերը: Բանի որ Ա լծորդության բայերը այստեղ փոխվում էին Ե լծորդության (խաղալցեմ), ուստի սրանք նույնպես ձեռք էին բերում կերպային հակադրության հատկանիշ: Իսկ Ի և Ու լծորդությունների բայերը ունեին ընդհանուր վերջավորություններ:

Արգելական հրամայականում ներգործակերպ-կրավորակերպ հակադրություն ունեին Ե լծորդության բայերը (մի՛ սիրե-մի՛ սիրեք): Մյուս լծորդությունների բայերն ունեն ընդհանուր վերջավորություններ:

Ինչպես անցյալ կատարյալում, այնպես էլ նրա հիմքից կազմվող 2-րդ ապառնիում և բուն հրամայականում ներգործակերպ-կրավորակերպ հակադրություն ունեին Ե լծորդության բոլոր, Ա և Ու լծորդությունների պարզ բայերը: Մյուս բայերն ունեին ընդհանուր վերջավորություններ: Պատահական չէ, որ միջին հայերենը չուներ ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ ապառնու ձևեր:

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 307:

<sup>2</sup> Մեսրոպյան շրջանում անորոշ դերբայի մեջ այդ փոփոխությունը տեղի չէր ունենում. -իլ մասնիկի գործածությունը անորոշում ընդհանրանում է համեմատաբար ուշ շրջանում: Ե լծորդության բայերի մեջ այն դեպքում, երբ դրանք արտահայտում էին կրավորական սեռի նշանակություն, այլև Ի լծորդության բայերի մեջ անորոշ դերբայում Ի-ն փոխվում էր Ե-ի:

<sup>3</sup> Այս մասին տես մաս Ա. Այտընյան, Զննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 94-97 (Նախաշախիդ), էջ 69, 73 (Զերականություն արդի հայերեն լեզվի), Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 42, Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1976, էջ 96-113, Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 8, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 389:



Եթե գումարենք այս բոլորը, կտեսնենք, որ չորս լծորդության երկու տիպարներում (ընդամենը 8 տիպար) յուրաքանչյուր բայի խոնարհման մեջ ընդունելով 6 եզր, ընդամենը 48 եզրից 22 ձև ներգործական է, 26 ձև՝ հասարակ: Սա նշանակում է, թե խոնարհման կեսից ավելին կրավորական չունի և իմաստով երկդիմի է: «Եվ այս երկդիմությունն են ահա մատնանշում բոլոր այն դերբայական ձևերը և մասնավոր ոճաբանությունները, որոնցով Ե դարի ոսկեդեմիկ գրողները աշխատել են խուսափել չարիքից: Ստորին դարերի զանազան գրվածքներում գտնում ենք այնպիսի նորոքինակ ձևեր, որ ո՛չ գրաբար են, ո՛չ աշխարհաբար, ո՛չ ներգործական են ըստ հին լեզվի և ո՛չ կրավորական են ըստ նոր լեզվի»<sup>9</sup>: Ա. Այտընյանն այսպիսի ձևերը համարում է ժամանակի «ռամկօրէնն փոխառեալ» ձևեր<sup>10</sup>:

Ինչպես ճիշտ նկատում է Հր. Աճառյանը, կրավորականի համար ստեղծված նոր վերջավորությունների մեջ ամենից շատ հանդիպում ենք ի ժայնավորին, որ գրաբարում կրավորական կազմող հայտնի նշանն է<sup>11</sup>: Բայց հանդիպում ենք նաև ու ժայնավորին, որի ծագումը տարբեր ստուգաբանություններ ունի: Մեզ համար ընդունելի է Ա. Այտընյանի կարծիքը<sup>12</sup>: Ըստ նրա, ու-ն առաջանում է գրաբարի բայարմատներից բայանուն կազմող -ուած ածանցի հետ՝ վերջինիս երկփեղկումով<sup>13</sup>: Օրինակ՝ դիպչել-դիպումած, յատանել-յատումած, արարել-արարումած: Միջին հայերենում այս բայերի մեջ տեղի է ունենում ու հնչյունի անկում՝ ձևավորելով -ած վերջավորվող ձևեր.

յատումած - յատած  
դիպումած - դիպած  
արարումած - արարած:

Բայական իմաստի վերականգնմամբ ու-ով ձևերը գիտակցվում են իբրև պասիվ, կրավորական գործողության ձևեր, իսկ արմատական ձևերը պահում են ներգործական իմաստը, ասել է թե՛ ինչպես յատել-ը ներգործական է, յատած-ն էլ է ներգործական, իսկ յատումած-ը կրավորական է: Եվ այսպես ձևավորվում է աշխարհաբարի ու ածանցը:

Ն. Մառը այս ածանցը կապում է գրաբարի որոշ բառերի (կոի-կուուել, թի-թուել) իսկ հնչյունախմբի փոփոխության հետ<sup>14</sup>:

Ըստ Պետերմանի<sup>15</sup>՝ գրաբարի Ու լծորդության բայերը, չունենալով առանձին կրավորական ձև, ներկայի ու ժայնավորի վրա ավելացրին ի ժայնավորը, որը Ե լծորդությունը կրավորականի վերածելու սովորական միջոցն է: Այսպիսով, ներգործական զենուկ, լնուկ ձևերի կողքին ստեղծվեցին կրավորական զենուիլ, լնուիլ ձևերը, ինչպես որ նախակիլիկյան շրջանում ստեղծված էին արդեն տամ բայից իբր կրավորական տուիւմ, տուիւս, տուի, տորուի («տրվեմ, տրվես, տրվի, տրվել»): Շուտով այս սխալ ձևի համաբանությամբ մյուս լծորդությունների բայերի կրավորականը ևս սկսեց կազմվել -ուիլ ձևով:

Կարստը նկատում է, թե կրավորականի այսպիսի ձևը նախ ներկայի և անորոշ դերբայի համար էր, ավելի ուշ անցավ կատարյալին հետևյալ ձևով: Կրավորականի նորահնար մասնիկը մտավ կրավորական կատարյալ թողու, բացու, սպանու, կերու, առու ձևերի մեջ, և սրանք դարձան թողուա, բացուա, սպանուա, կերուա, առուա ևն:

Այս օրինակով կազմվեցին նաև անորոշ դերբայի լուանուիլ, յիմընուիլ «իմացվել», գողընուիլ «գողացվել», դնուիլ «դրվել», բանուիլ, լնուիլ «լցվել», տվուիլ «տրվել» ևն ձևերը՝ լուանալ, իմանալ, գողանալ, դնել, բանալ անորոշներից: Ավելի ուշ կատարյալի քնի

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 325:

<sup>10</sup> Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 73:

<sup>11</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 326:

<sup>12</sup> Այդ կարծիքը հետագայում հաստատում են Ստ. Պալասանյանը (Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրատիպոգրֆիկայի հայոց, Թիֆլիս, 1870), Մ. Արեղյանը (Երկեր, հ. 2, էջ 42), Ա. Մուրվալյանը (Հայոց լեզվի բառային կազմը, էջ 389), Ա. Աբրահամյանը (Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երև., 1953, էջ 211):

<sup>13</sup> Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., Նախաշարի, էջ 97, Ջերականություն ..., էջ 73:

<sup>14</sup> Տե՛ս Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, էջ 52:

<sup>15</sup> Այս և հետագա շարադրանքում հետևում ենք Հր. Աճառյանին (հ. 4, գ. Բ, էջ 326):

վրայից կազմվեց նոր անորոշ դերբայ՝ լուացուիլ, իմացուիլ, ցուիլ, բացուիլ, դրուիլ, կե-  
րուիլ, որ մրցման մեջ մտավ նախորդ լուանուիլ ևն (ներկայաբուն) ձևերի հետ և ի վերջո  
հաղթեց:

Կարստը ու մասնիկի ծագման համար հիշեցնում է նաև գրաբար ցրեմ-ցրուեմ, կծեմ-  
կծուեմ, կտեմ-կտուեմ բառերի համեմատությունը, որոնց վրա Հր. Աճառյանը ավելացնում  
է դրդել-դրդուել և նշում, որ այս բոլորի մեջ ու-ն ավելի գորացուցիչ է և բնավ ոչ կրավորա-  
կան<sup>16</sup>: Նրա կարծիքով, 12-րդ դ. կրավորականի այս նոր ձևը արդեն հաստատված իրողու-  
թյուն էր:

Այսպիսով, աշխարհաբար գրական լեզուն, սկսած միջին հայերենի ժամանակնե-  
րից, ունի նաև -ու- կերպածանցը: Այն առավելապես քերականական սեռի ցուցիչ է. ներ-  
գործական սեռի բայերը հակադրվում են կրավորականին, երբ ստանում են -ու- ածանց,  
րնդ որում արևմտյան գրականում Ե և Խ լծորդությունների բայերը՝ ներկայի հիմքի վրա,  
իսկ Ա լծորդության բայերը՝ կատարյալի հիմքի վրա: Այսպես.

սիրել-սիրուիլ	իմանալ-իմացուիլ
խօսիլ-խօսուիլ	տեսնել-տեսնուիլ
աղալ-աղացուիլ	գտնել-գտնուիլ:

Բացառություն են կազմում լեցնել, հագնիլ<sup>17</sup>, հարցնել և ցուցնել բայերը, որոնք կրա-  
վորականի կազմության ժամանակ -ն- կերպածանցը չեն պահպանում (լեցուիլ, հագուիլ,  
հարցուիլ, ցուցուիլ): Սրանցից ցուցնել-ը հնաբանություն է և փոխարինվում է ցոյց տալ  
հարադրությամբ, որի կրավորականը լինում է ցոյց տրուիլ: Ըլլալ բայի կրավորականը  
անկանոն է. ըլլուիլ, փոխանակ ըլլացուիլ:

Որոշ անցողական բայեր ևս կարող են վերածվել կրավորականի՝ -ցնել վերջավորու-  
թյանը դարձնելով -ցուիլ. օրինակ՝ մոռցնել-մոռցուիլ:

Երբ անցողականը կազմված է տալ բայով, կրավորականի է վերածվում միայն տալ  
բայը. օրինակ՝ բերել տալ-բերել կը տրուիլ:

-Չ- ածանցավոր բայերից կրավորական չի կազմվում, թեև, ըստ Այտրընյանի, բռչիլ,  
փախչիլ, փչչիլ, կաչիլ, փակչիլ բայերի կրավորականը կանոնավորապես կազմվում է ներ-  
կայից, օրինակ՝ դաչուիլ<sup>18</sup>:

Ա լծորդության բայերի կրավորականը նույնն է ճրանց անցողականի կրավորակա-  
նի հետ, օրինակ՝ աւելնալ-աւելցնել-աւելցուիլ:

Հետաքրքիր է այս առիթով Ա. Այտրընյանի կարծիքը. «Ամէն անցողական կրատրա-  
կան չունենար, այլ անոր տեղ իւր ներգործականին կրատրականը կը դրուի, որ շատե-  
րունն արդէն նոյն է, օր.՝ ճանչցուիլ, գողցուիլ: Նոյնպէս -ցընել վերջատրած ներգործա-  
կաններուն՝ շատ անգամ իրենց չէզոքն է իրենց կրատրականը»<sup>19</sup>: Բայց մյուս լծորդու-  
թյունների բայերի և նրանց անցողականների կրավորականները տարբեր են, օր.՝ խմել-  
խմուիլ, խմցնել-խմցուիլ, խօսիլ-խօսուիլ, խօսեցնել-խօսեցուիլ:

Հակառակ գրաբարի՝ արևմտահայերենում կրավորական կազմվում է երբեմն նաև  
չեզոք բայերից: Սակայն սա մասնակի երևույթ է, և կան շատ չեզոք բայեր, որոնք չունեն  
կրավորական. դրանց կրավորականը կազմվում է անցողականից.

<i>չեզոք կրավորական անցողական</i>		<i>կրավորական</i>	
փրթիլ	-	փրցնել	փրցուիլ
փակչիլ	-	փակցնել	փակցուիլ
փախչիլ	-	փախցնել	փախցուիլ:

<sup>16</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 327:

<sup>17</sup> Ըստ Այտրընյանի՝ այս բայի կրավորականը կանոնավոր է՝ հագնուիլ: Նա նաև գրում է, որ  
«Կա գատ չէզոք ալ. հագուիլ, հագուեցայ, հագուած»: Սակայն հետազայում հագուիլ-ը սկսել է գոր-  
ծածվել նաև կրավորականի իմաստով (իմմտ. Պազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայերէն  
լեզուի, Միջին դասընթացը, Կ. Պոլիս, 1910, էջ 140):

<sup>18</sup> Տե՛ս Ա. Այտրընյան, նշվ. աշխ., էջ. 64-65:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 92:

Ըստ Հր. Աճառյանի՝ չեզոքից կրավորական կազմելու երևույթը մտել է հայերենի մեջ բուրբերենի ազդեցությամբ՝ ստեղծելու համար կարողական բայը, որ հայերենում առանձին քերականական կարգ չէր:

Արդեն նշել ենք, որ -ուի վերջավորությունը կարող է արտահայտել ոչ միայն կրավորական, այլև չեզոք սեռի իմաստ<sup>20</sup>: Այս տեսակետից էլ գրաբարի -ի վերջավորվող մի շարք չեզոք բայեր<sup>21</sup> արևմտահայերենում ունեն -ուի վերջավորություն: Դրանցից են՝ այլանդակի, այսահարի, բովանդակի, գժտի, գիրկընդխառնի, գոյառի, խառնի, ժրոռի, հաշտի: Օր.՝ «Սպասումի դառնութեան եկա խառնուիլ յուսալքումը» (Բ, 1963, N 8, էջ 48): «Գիտնաս, որքան կը գթամ վրադ, կ'ուզե՞ս հաշտուիք, հին ընկեր» (ՎՇԱԳ, էջ 110):

Մի խումբ բայեր էլ -ուի վերջավորությամբ արտահայտում են թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի նշանակություն. չեզոքի համար այլ ձև (ի վերջավորությամբ) չունեն: Դրանցից են՝ գօտեպնդուի (գրք. գօտեպնդի), դարմանուի (գրք. դարմանի), ենթարկուի (գրք. ենթարկի): Օրինակ՝ «1915 թ հայերը կոտորածի կ'ենթարկուին ցեղասպան բուրբին կողմե՛» (Բ, 1976, N 1, էջ 13)-կրավ.: «Երկու ներհակ տրամադրություններու ենթարկուեցաւ» (Բ, 1963, N8, էջ 45) – չեզոք:

-Ուիլ ածանցով կազմված նույնարմատ մի քանի բայերի կրավորականը և չեզոքը հնչյունական կազմով տարբերվում են. պահուիլ (կ.) և պահուլտիլ (չ.), ժեծուիլ (կ.) և ժեծկուիլ (չ.)<sup>22</sup>:

Մի փոքրիկ խումբ էլ չեզոք իմաստ է արտահայտում և՛ գրաբարյան իլ և՛ նորաստեղծ ուի վերջավորություններով. ազատիլ/ազատուիլ, եփիլ/եփուիլ, գունատիլ/գունատուիլ, ծխտուիլ/ծխտուուիլ, պատակտիլ/պատակտուիլ: Օր.՝ «Երբ ռոքի ելլել ուզեց, չկրցաւ ազատուիլ անոր կաշկանդումներէն» (Բ, 1962, N 7, էջ 37): «Եթէ պատահեամբ ազատի դրամի, զգայարանքներու ու կիներու թափորէն, գոհ կ'երթայ Ազատեմի Ֆրանսէզի կախարդներուն» (Բ, 1962, N 2, էջ 55):

Կան բայեր, որոնց կրավորական սեռը կազմվում է -ի վերջավորությամբ<sup>23</sup>: Այսպիսի բայերը գրաբարյան կերպարանք ունեն և հավասարապես կիրառվում են թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռերի իմաստով, այսինքն՝ սեռի քերականական իմաստ արտահայտելու տեսակետից համանուն են. կիրառության ընթացքում՝ խոսքի մեջ, համանունությունը չեզոքանում է: Այդպիսին են, օրինակ, այրիլ, մարիլ: Օրինակ՝ «Անոր անունը կ'այրի շրթներուս վրայ...» (ՎՇԱԱ, էջ 48)-չեզոք: «Բուսականութիւնը այրած էր արեւեն»<sup>24</sup>-կրավ.: «Աշակերտուիին մարեցաւ»-չեզոք: «Մոմը մարեցաւ հովէն»<sup>25</sup>-կրավ.:

Ըստ Այտընյանի՝ այդպիսի բայեր են մաս հետևյալները՝ զանազանիլ, բաժանիլ, փառատորիլ<sup>26</sup>: Սակայն ներկայումս այս բայերի կրավորականը կազմվում է հիշյալ քերականական իմաստի -ու- ցուցիչով՝ զանազանուիլ, բաժնուիլ, փառատորուիլ: Ավելին, -իլ ձևերը չեն պահպանվել նույնիսկ չեզոք նշանակության համար, որը նույնպես արտահայտվում է ու ածանցով: Օր.՝ «Բաժնուեցայ Սնապեանէն, բայց չկրցայ բաժնուիլ խռովքէն, որ կ'ալելկոծէր մեր երկուքին հոգիները» (Բ, 1962, N8, էջ 15)-չեզոք: «Յայտագիրը բաժնուած էր 2 մասի» (Բ, 1963, N 8, էջ 77)-կրավ.:

Ըստ Այտընյանի՝ արևմտահայ աշխարհարարում «շատ բայեր կրատրականէն զատ չեզոք մ'ալ ունին, որ նայնպես ներգործականէն կ'աժանցի իլ մասնիկով»: Նշանակության

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>21</sup> Վկայությունները տե՛ս ՆՀԲ-ում (Գ. Անտիքեան, Խ. Միսրմէլեան, Մ. Ասգեռեան, Նոր բառ-գիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981):

<sup>22</sup> Ա. Այտընյանը ունի պազմուիլ (կր.) և պազտուիլ (չեզ.) ձևերը (նշվ. աշխ., էջ 152, § 578), սակայն ներկայումս դրանք չեն կիրառվում:

<sup>23</sup> Այս մասին տե՛ս նաև Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 88, Կ. Առաքելեան, Արդի հայերենի քերականութիւն, Բ գիրք, Պէյրոս, 1998, էջ 185-186:

<sup>24</sup> Տե՛ս Կ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 186:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 88:

տեսակետից կրավորականից նրանով են տարբերվում, որ «չեզոք ըլլալով՝ չէ թէ ուրիշէն կրել կամ ըլլուիլ, այլ ինքն իրմէ ըլլալ մը կը ցուցնեն», օրինակ՝

<i>ներգործ.</i>	<i>չեզոք</i>	<i>կրատք.</i>
կտրել	կտրիլ	կտրուիլ
կտտրել	կտտրիլ	կտտրուիլ
այրել	այրիլ	այրուիլ
թափել	թափիլ	թափուիլ
ազատել	ազատիլ	ազատուիլ
պատռել	պատռիլ	պատռուիլ
տարածել	տարածիլ	տարածուիլ
ծռել	ծռիլ	ծռուիլ
մարել	մարիլ	մարուիլ:

Այտընյանը միաժամանակ նրբորեն նկատում է, որ թեև «Այդ չեզոքն արդի լեզուի յատուկ է, եւ ոչ գրաբարն ունի այս զանազանութիւնը», «Բայց արդի լեզուին մէջ ալ ատենց կրատրականը ցանցատ կը գործածուի եւ կամ իբրեւ դիմագուրկ»<sup>27</sup>: Պատահական չէ, որ արդի արևմտահայերենում այս բայերի մի մասը կրավորական նշանակություն է արտահայտում առանց -ու- ածանցի՝ չեզոքի ձևով՝ **ծռիլ, այրիլ, մարիլ, ազատիլ, թափիլ, տոչորիլ**<sup>28</sup>:

Դեռևս միջին հայերենը փորձել է ու մասնիկի օգնությամբ, չիրաժարվելով նաև գրաբարի կրավորակերպ խոնարհման է>ի հնչյունափոխությունից, կազմել եռանդան հակադրություն՝ ներգործական-կրավորական-չեզոք՝ կու բաժնեմ - կու բաժնիմ - կու բաժնուիմ: Այս առիթով Հր. Աճառյանը գրում է. «Այս եղավ սքանչելի մի միջոց գրաբարում բայական սեռը զանազանելու համար՝ համաձայն վերջավորության»<sup>29</sup>: Այս երևույթը անցել է արևմտահայ աշխարհաբարին՝ **թափել - թափիլ - թափուիլ, ազատել - ազատիլ - ազատուիլ**:

Օրինակ՝ «Վերջինս ամէն ճիգ **թափեց** ներողամտութեան արժանանալու համար» (ՇՇՅԴ, էջ 85): «Սակայն մարդիկը պէտք չէ մոռնան պատերազմի արհաւիրքները, որպէսզի **թափին** այդ ցնորքէն» (Ար., 25.5.1949): «Շնորհի մտաւորական մարզին մէջ **թափուած** լուրջ ջանքերու... հասաւ երիտասարդ գրողներու փաղանգ մը» (Բ, 1962, N 7, էջ 39):

Սակայն սեռերի տարբերակման այս ձևը ինչպես միջին հայերենում, այնպես էլ արևմտահայերենում բոլոր բայերի վրա չտարածվեց: Դրա պատճառը թերևս այն էր, որ հայերենի կրավորական ու չեզոք սեռերի իմաստները վաղուց ի վեր դրսևորվել էին մի ցուցիչով: Հայերեն բայերի այդ առանձնահատկությունը պահպանվել է հետագայում. -ու- ածանցով արտահայտվել է նաև չեզոք սեռի իմաստ:

Ինչպես տեսնում ենք, լեզվի պատմական զարգացման ընթացքում մի կողմից -իլ վերջավորով չեզոք բայերի քերականական իմաստն է սկսել արտահայտվել բուն կրավորական ձևով՝ (բաժանիլ>բաժնուիլ), մյուս կողմից՝ արդեն -ուիլ վերջավորությամբ հաստատված որոշ կրավորականների իմաստը՝ -իլ վերջավորությամբ (այրուիլ>այրիլ)՝ առաջ բերելով քերականական համանուններ: Բարեբախտաբար, սա ընդհանուր երևույթ չէ: Բացի այդ, ուիլ>իլ փոփոխության ենթարկված կրավորականների մի մասը շարունակում է իր քերականական իմաստը զուգահեռաբար արտահայտել նախկին ձևով, օրինակ՝ **թափուիլ/թափիլ**: Գրական լեզուն զերադասում է երբեմն -ու-ով, երբեմն առանց -ու-ի ձևերը:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 242-243:

<sup>28</sup> Տե՛ս Կ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 185-186:

<sup>29</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 404:

Կրավորական բայերը խոնարհվում են Ի լծորդության պարզ բայերի կանոնով:

Այսպիսով, արևմտահայերենում զարգացել է կրավորական սեռի –ու- ցուցանիշը, որի ստեղծումով լեզվից անհետացել են ոչ միայն կրավորականի զանազան ձևերը, այլև հասարակ կոշված բայերը (բացառությամբ ծնանիլ բայի), որոնց ներգործական և կրավորական խոնարհումը սկսել է տարբերվել (խօսիլ-խօսուիլ, համարիլ-համարուիլ)<sup>30</sup> նախքան խոնարհումների պարզեցումը: Այդ ածանցը առաջանալուց հետո արևմտահայերենի բայասեռի դրսևորման մեջ առաջատարը ձևական հատկանիշն է: Ներգործականի ու կրավորականի միջև այլևս չփոթմունք չկա, իսկ կրավորական բայերի խոնարհումը, որ այնքան բազմաձև ու խառն է զրաբարում, միակերպ ու պարզ է աշխարհաբարում: Այս առիթով հետաքրքիր է Այտընյանի կարծիքը. «Իսկ նոր հայերենի մեջ դադրած են ամեն համարիւններն որ երկու սեռերուն նոյնաձայնութենէն կը ծագէին՝ հաստատուն իլ և մանաւանդ ուիլ կրատրականի յատուկ խոնարհմամբը. վասնզի հիմայ կրատրական նշանակութեան որոշիչ բուն ու մասնիկն է՝ հին ռամկօրէնի մեջ երբեմն գործածուած, իսկ նոր լեզուին ընդհանուր կրատրական շինողը»<sup>31</sup>:

Պետք է նշել նաև, որ եթե արևելահայերենում կրավորականի կազմությունը ոչ մի կապ չունի բայաձևերի վերջավորությունների հետ և որևէ ձևով չի անդրադառնում ձևակազմության վրա/հմմտ. գրում է-գրվում է, գրեց-գրվեց և այլն/, ապա արևմտահայերենում այն արտահայտվում է թե՛ բայակազմության և թե՛ ձևակազմության միջոցով /հմմտ. կը գրէ-կը գրուի, գրեց-գրուեցաւ, այրել-այրիլ, կ'այրէ-կ'այրի, այրեց- այրեցաւ և այլն /:

## ՀԱՍՏԱՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ար. - «Արարատ» օրաթերթ, Պէյրուք:

Բ. - «Բագին» լրագիր, Պէյրուք:

ՇՇՅԴ - Շահան Շահնուր, Յարալեզներուն դաւաճանութիւնը, մատենաշար «Յառաջ», Փարիզ, 1971:

ՎԽՀԲ - Վահրամ Մավյան, Հայու բեկորներ, «Միյոտքահայ գրողներ», Եր., 1967:

ՎՇՄԱ - Վազգէն Շուշանեան, Մահուան առագաստը, մատենաշար «Ազդակի» թիւ 58, Պէյրուք, 1952:

ՎՇԱԳ - Վազգէն Շուշանեան, Ամրան գիշերներ, մատենաշար «Ազդակի» թիւ 59, Պէյրուք, 1952:

**Л. Н. ГАЛСТЯН - Выражение страдательности в грабаре и в западноармянском языке.** - В статье исследуется выражение страдательности в грабаре и в западноармянском языке. Показывается, что в западноармянском был развит формальный показатель *ni* (*y*) страдательного залога, благодаря чему из языка исчезли не только разные формы страдательности, но и “простые” глаголы, за исключением глагола *ծնանիլ* (родить, рождаться). После образования этого суффикса (*ni*) между действительным и страдательным залогами больше нет путаницы.

<sup>30</sup> Հմմտ. Ստ. Պալասանյան, Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի Հայոց, Թիֆլիս, 1870, էջ 85, Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի..., էջ 389:

<sup>31</sup> Ա. Այտընյան, նշվ. աշխ., Նախաշառիղ, էջ 97: